Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ ենթական ուսուցիչների վերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «ԿԱՊԿՈՒ երեխաների հերգրավածության ապահովումը խմբային աշխատանքի միջոցով»

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Մարտունի

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բեյբության Հասմիկ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Պետրոսյան Մարտուն

ԴՊՐՈՑ՝ «Գեղհովիտի թիվ 1 միջնակարգ դպրոց»

Մարտունի-2022

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող՝ ԿԱՊԿՈՒ անձանց համար:

ԿԱՊԿՈՒ անձանց կրթության նպատակը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց իրենց ընդունակություններին և կարողություններին համապատասխան և առողջությանը համարժեք ուսումնական միջավայրում նրանց հասարակական հարմարեցման, ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերման, աշխատանքային, մասնագիտական գործունեության և ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովումն է[1]:

Այն ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում, ինչը հանրակրթական դպրոց մտնելու այցեքարտ է ընձեռնում հատուկ կարիքներ ունեցող երեխաներին:

Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե ներառական կրթության մտցրած փոփոխություններն ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիք ունեցողները:

Դպրոցում՝ հատկապես ֆիզկուլտուրայի ժամերին, ուսուցիչը պետք է առավել ուշադրություն դարձնի այն երեխաներին, որոնք ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, նրանց հետ պետք է աշխատի բարեխղճորեն, պետք է հնարավորինս ներգրավի դասապրոցեսի մեջ և այնպիսի պայմաններ ստեղծի, որ տվյալ երեխան իրեն դասարանի լիարժեք մասնիկը զգա: Այս ամենն առավել դժվար է դառնում հատկապես մարզերի դպրոցներում աշխատող ուսուցիչների համար, քանի որ այստեղ ֆիզկուլտուրայի դասերը լիարժեք անցկացնելու համար այդքան էլ բավարար չեն պայմանները և այս խնդիրն էլ ավելի է դժվարացնում ԿԱՊԿՈՒ անձանց հետ կրթությունը: Օրինակ՝ հենց այն փաստը, որ դպրոցների մեծ մասում չկան թեքահարթակներ, իսկ սպորտդահլիճները, որոնք նախատեսված են ֆիզկուլտուրայի դասերի համար, գտնվում են հիմնականում ոչ առաջին հարկում, և այլ այսպիսի խնդիրներ:

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=67166

Մեր հետազոտական աշխատանքում համառոտ գրական ակնարկ ենք կատարելու, խոսելու ենք թե՛ ներառական կրթության, թե՛ ԿԱՊԿՈՒ երեխաների արդյունավետ կրթության մասին, կատարելու ենք փորձարարական դաս, որտեղ ներկայացնելու ենք դասի նմուշ-օրինակներ, որին մասնացելու են նաև ԿԱՊԿՈՒ երեխաներ, փորձելու ենք ցույց տալ այն մեթոդներն ու հնարները, որոնք հնարավորություն կտան այդ երեխաներին առավել ակտիվորեն մասնակցել ֆիզկուլտուրայի դասերին և բացի տեսական գիտելիքներ ստանալուց նաև ֆիզիկապես առողջ լինել, թիմային խաղերի միջոցով փորձելու ենք նրանց դուրս բերել մեկուսացումից, սերմանել մի շարք կարևոր հատկանիշներ և այլն: Վերջում կատարելու ենք վերլուծություն, անելու ենք առաջարկներ, որոնք առավել հեշտ և հարմարավետ կդրածնեն ԿԱՊԿՈՒ երեխաների հետ կրթությունը և կնպաստեն նրանց զարգացմանը: Աշխատանքի վերջում ներկայացնելու ենք նաև երկու դասապլանի օրինակներ:

2.ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը[2]:

«Կրթության մասին»[3] Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի թիվ ՀՕ-297 օրենքը սկիզբ դրեց հատուկ կրթության համակարգի բարեփոխումների ու ներառական կրթության

[2] https://escs.am/am/static/inclusiveeducation?s=edu

[3] «Կրթության մասին» ՀՀ օրենք, 6-րդ հոդված, մաս 6:

համակարգի բարեփոխումների ու ներառական կրթության հիմնադրման, որի հիմքում յուրաքանչյուր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն է, կրթության կազմակերպումն իր համայնքում՝ առանց ընտանիքից մեկուսացնելու, և կրթության գործընթացին երեխայի ակտիվ մասնակցության խրախուսման սկզբունքների ապահովումը:

Ներառական կրթությունը յուրաքանչյուր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի համար, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է:

ԿԱՊԿՈՒ է համարվում այն անձը, ով ունի ուսուցման հետ կապված դժվարություններ, այդ թվում՝ զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններ, որի կողմից հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացվելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ:

Ներառական կրթությունը ցանկացած երեխայի իրավունքների պաշտպանության կարևոր բաղադրիչներից է: Այն բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ և սովորելու հնարավորություն է տալիս հանրակրթական դպրոցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) անձանց: Ներառական կրթությունը մշակվում է ավելի նկուն մոտեցմամբ, որպեսզի բավարարի տարբեր կրթական պահանջներ ունեցող երեխաներին, և նրանք նույնպես դպրոցում սովորելու հավասար իրավունքներ ու հնարավորություններ ունենան: Հայաստանը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք:

ԿԱՊԿՈՒ երեխաների կրթությունը կազմակերպվում է հիմնական–առարկայական ուսուցիչների կողմից՝ ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ համատեղ ուսուցման միջոցով: Ներառական կրթության համակարգը ենթադրում է առարկայական ուսուցիչների և բազմամասնագիտական թիմի միջև ակտիվ համագործակցություն՝ ԿԱՊԿՈՒ երեխաների համար դասավանդման մեթոդների, մոտեցումների և անհատական ծրագրերի մշակման

հարցերում: Ինչպես սահմանվում է ՆԿ կազմակերպման պետական կարգով՝ ԱՈԻՊ-երի կազմման մեջ իրենց մասնակցությունը պետք է ունենան նաև ԿԱՊԿՈԻ երեխաների ծնողները/խնամակալները[4]:

Թե՛ ուսուցիչները, թե՛ աշակերտները պետք է հնարավորինս օգնեն և նպաստեն, որպեսզի նման խնդիրներ ունեցող երեխաները կարողանան դասերին հնարավորինս ակտիվորեն մասնակցել և պետք է ստեղծեն այնպիսի պայմաններ, որոնք կօգնեն նրանց իրենց դասարանի լիարժեք մաս զգալ:

Շատ է կարևորվում դասերի անցկացումը խմբային աշխատանքների միջոցով, քանի որ այս դեպքում նրանք կարողանում են ավելի շատ շփվել իրենց դասարանի աշակերտների հետ, ավելի խորն է արտահայտվում համագործակցության մեթոդը, որը հատկապես ԿԱՊԿՈԻ երեխաների հետ աշխատելիս ամենարդյունավետ մեթոդներից մեկն է համարվում:

Ներքևում կներկայացնեմ երկու դասապլան, որի մեջ կտեսնեք խմբային աշխատանքի մեթոդը, այստեղ բացի համագործակցության մեթոդից օգտագործել եմ նաև հին պայուսակ մեթոդը, որի միջոցով աշակերտներին խմբերի եմ բաժանել: Այս մեթոդի միջոցով առավել հետաքրքիր է կատարվում խմբերի բաժանումը և այն աշակերտներին ստիպում է ավելի աշխուժորեն մասնակցել դասապրոցեսին:

[4] https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_8.pdf

3.ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ

3.1Խմբի նկարագիր

Ընտրել եմ 6^{ա} դասարանը, որտեղ սովորում է 22 աշակերտ՝ 12 աղջիկ և 10 տղա: Նրանցից երկուսը ԿԱՊԿՈՒ աշակերտներ են, երկուսն էլ տղաներ: Այս դասարանում առաջադիմությունը բավականին բարձր է, ամենակարևոր հատկանիշներից մեկն էլ այն է, որ այստեղ աշակերտները կարողանում են շփման եզրեր գտնել ԿԱՊԿՈՒ տղաների հետ, ճիշտ է երբեմն լինում են խնդիրներ, բայց հատկապես ֆիզկուլտուրայի ժամերին նրանց շփումը ստացվում է: Դասարանի երկու ԿԱՊԿՈՒ տղաներն էլ՝ Նարեկն ու Արմենն ունեն հաշմանդամություն, Նարեկը՝ ոտքերի, Արմենը՝ ձեռքերի:

Ճիշտ է հատկապես իմ առարկայի՝ ֆիզկուլտուրայի ժամերին, բավականին խնդիրներ են առաջանում, կապված տեղաշարժվելու հետ, քանի որ մարզադահլիճը երկրորդ հարկում է, հիմնականում Նարեկը դառնում է ագրեսիվ, տեղաշարժման խնդիր է առաջանում, բայց մենք ամեն դեպքում օգնում ենք նրան և դասարանի մնացած աշակերտների հետ միասին նա էլ է մասնակից դառնում դասապրոցեսին:

Ներքևում կներկայացնեմ երկու փորձարարական դաս, որոնց շրջանակում փորձել եմ հնարավորինս ներգրավել այդ երեխաներին և դասարանի աշակերտների հետ միասին ստեղծել ենք այնպիսի մթնոլորտ, որ նրանք իրենց դասարանի լիարժեք անդամ զգան:

1. 3.2 Փորձարարական դաս-1

Փորձարարական դաս 1-ի ժամանակ թեմա եմ ընտրել Ֆուտբոլ մարզաձևի առանձնահատկություններն աշակերտների, հատկապես ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելիս: Ինչպես վերը նշեցի դասն անցկացնելու եմ 6ա դասարանի հետ՝ մարզադահլիճում: Այս դասարանում երկու ԿԱՊԿՈՒ երեխաների՝ Նարեկի և Արմենի հետ աշխատելը բավականին բարդ է, սակայն կարծում եմ ուսուցիչը պարտավոր է ստեղծել այնպիսի պայմաններ, որպեսզի նրանք իրենց օտար չզգան և կարողանան դասի լիարժեք մասնակիցը դառնալ: Դասի նպատակն է՝ ԿԱՊԿՈՒ աշակերտներին հնարավորինս ներգրավել դասին և սովորեցնել ֆուտբոլի կանոններն ու հմտությունները:

Դասի սկզբում համառոտ ներկայացրել եմ Ֆուտբոլ մարզաձևը, խոսել նրա կարևորության մասին՝ որպես թիմային մարզաձև: Այնուհետև դասարանը բաժանել եմ խմբերի՝ հին պայուսակ մեթոդի միջոցով. պայուսակի մեջ լցրել եմ 4 ֆուտբոլիստների անուններ, յուրաքանչյուրից 6-ական, և աշակերտները հերթով վերցրել են այդ անուններն ու ըստ անունների կրկնության բաժանվել են 5 խմբի, Նարեկն ու Արմենը նույնպես ներառված էին խմբերում: Այնուհետև յուրաքանչյուր խմբի հանձնարարել եմ կատարել գնդակով վարժություններ, միմյանց փոխանցումներ կատարել, Արմենը աշխուժորեն անմիջապես ներգրավվեց դասապրոցեսին, Նարեկը սկզբում չէր ցանկանում մասնակցել, սակայն նրա հետ հոգեբանորեն խոսելուց հետո, երբ ասացի, որ նա կարող է կատարել այն բոլոր վարժությունները, ինչ իր ընկերները, որ ինքը պետք է դժվարություններ հաղթահարի, որպեսզի շուտ վերականգնվի, նա ճիշտ է ոչ այդքան վստահ, բայց համաձայնեց: Ես նրան թույլ տվեցի, որ ձեռքով կատարի փոխանցումներ, արդեն 10 րոպե անց Նարեկը ժպիտով իր խմբի հետ կատարում էր հանձնարարությունը:

Ինձ հատկապես շատ ուրախացրեց այն փաստը, որ դասարանի աշակերտները չէին խուսափում Նարեկին և Արմենին իրենց խմբի մեջ ներառելուց: Հակառակը նրանք էին առաջարկում միանալ իրենց խմբին, օգնում էին, երբ ինչ-որ բաներ տղաների մոտ չէր ստացվում:

Վարժությունները կատարելուց հետո, հերթը ֆուտբոլ խաղալունն էր, այստեղ ևս Նարեկն ու Արմենը մասնակցեցին, Նարեկը դարպասապահն էր, իսկ Արմենը՝ խաղացող: Դասի ավարտին հանձնարարեցի տանը ուսումնասիրել ֆուտբոլը, գտնել հետաքրքիր պատմություններ դրա մասին և կատարել մարզադահլիճում սովորած վարժությունները:

Այս դասի շրջանակում և՛ ես, և՛ աշակերտները, և՛ Նարեկն ու Արմենը հասկացանք, որ անհնարին ոչինչ չկա:

Ես հատկապես ֆուտբոլն էի ընտրել դասի թեմա, քանի որ սա բացի խաղին տիրապետելուց հնարավորություն է տալիս նաև երեխաներին մի շարք մարդկային հատկանիշներ փոխանցել՝ ընկերասիրություն, հաղթանակի ձգտում, միմյանց օգնելու ընդունակություն, և սա հատկապես արժևորվեց ԿԱՊԿՈՒ աշակերտների պարագայում:

3.3 Փորձարարական դաս-2

Փորձարարական դաս-2-ը նույնպես անցկացրել եմ 6^{ա} դասարանի հետ, թեման՝ շարային վարժությունների կատարումն է, աշխատանք ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ: Դասի նպատակն է, որ աշակերտները և հատկապես Նարեկն ու Արմենը կարողանան տարբերել աջն ու ձախը, ճիշտ դարձումներ կատարեն թե՛ կանգնած դիրքից, և թե՛ շարժման ընթացքում:

Դասի սկզբում կրկին զրույց մեթոդի միջոցով խոսել եմ շարային վարժությունների մասին, բացատրել եմ դրանց կարևորությունը, նշել եմ, որ այն ֆիզկուլտուրայի ամենակարևոր բաղադրիչներից է և որ յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա դրանք: Այնուհետև դասարանը բաժանել եմ կրկին 5 խմբի, յուրաքանչյուր խմբի հանձնարարել եմ կատարել դարձումներ և՛ տեղում, և՛ շարժման ընթացքում: Արմենի մոտ ստացվում էր, իսկ Նարեկը ինչպես և առաջին դասին չէր ցանկանում մասնակցել: Նրա համար ընտրեցինք տարբերակ, որ նա պարզապես ձեռքերով ցույց տա, որն է աջը և որը ձախը, իսկ դարձումների

ժամանակ սայլակով անի, ճիշտ է շատ դանդաղ էր ստացվում, բայց կարևորն այն էր, որ նա փորձեց և չցանկացավ հետ մնալ իր ընկերներից:

Արմենի մոտ էլ դժվարություն առաջացավ այն ժամանակ, երբ շարքերով քայլում էին և պետք է ձեռքերն էլ, ոտքերի հետ համաչափ շարժեր, ճիշտ է նա չկարողացավ անել, բայց կարևորն այն էր, որ չընկճվեց և շարունակեց մնալ շարքում: Դասի ավարտին հանձնարարեցի տանը կրկնել այն բոլոր վարժությունները, որոնք անցկացվել էին դասի ընթացքում:

Երկու դասաժամերի ընթացքում էլ Արմենն ու Նարեկը արեցին ամեն բան, որպեսզի հետ չմնան իրենց ընկերներից, որպեսզի չտարբերվեն: Նրանք կարողացան իրենց կամքի ուժի շնորհիվ ապացուցել, որ իրենք ևս համարվում են լիարժեք մարդիկ և ոչնչով չեն տարբերվում մնացածից, պետք է ճշտեմ, որ այս ամենի մեջ իրենց մեծ դերն ունեցան նաև դասարանի աշակերտներն ու իմ հոգեբանական զրույցները նրանց հետ:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ֆիզկուլտուրայի դասերի ճիշտ կազմակերպումը, բացի մանկավարժ լինելուց նաև հոգեբանորեն երեխաների հետ աշխատելը շատ է կարևորվում, երբ հատկապես դասարանում առկա են ԿԱՊԿՈՒ աշակերտներ: Ճիշտ մոտեցում ցույց տալը, դասերին նրանց ներգրավելը և այնպիսի մթնոլորտ ստեղծելը, որ ԿԱՊԿՈՒ աշակերտն իրեն դասարանի ամբողջական մասը զգա շատ առանցքային է:

Վերլուծելով կատարած աշխատանքը՝ կարող ենք ասել, որ եթե ուսուցիչը մի փոքր ջանք գործադրի, ունենա համբերություն և բացի մանկավարժականից նաև հոգեբանորեն աշխատի ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ, ապա անպայման արդյունքի կհասնի: Ես սեփական փորձով ցույց տվեցի, որ ոչինչ անհնարին չկա, որ ԿԱՊԿՈՒ աշակերտներն էլ ունեն սովորելու, առաջադիմելու և զարգանալու ձգտում, ընդամենը պետք է նրանց հնարավորություն տալ:

Արդեն վերը նշել եմ, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ կապված դժվարություններից գլխավորն իմ առարկայի շրջանակում, բացի մասնագիտական հմտություններ տալը նաև դպրոցի անհարմարավետ պայմաններն են, հատկապես մարզադահլիճը: Եթե այս խնդիրը գոնե որոշ չափով լուծվի՝ ստեղծվեն թեքահարթակներ, կամ վերելակներ, ապա շատ ավելի հեշտ կլինի այդ երեխաների հետ աշխատանքը, քանի որ երբ նրանք տեղաշարժման խնդրին են բախվում ակնհայտորեն ագրեսիվ են դառնում և ըստ այդմ էլ դժվարանում է նրանց հետ շփումը:

Ճիշտ է շատ կան նաև այնպիսի ԿԱՊԿՈՒ երեխաներ, որոնք բացի ֆիզիկականն ունեն նաև մտավոր խնդիրներ, այս դեպքում ուսուցչի գործը կրկնակի բարդություն է պահանջում և էլ ավելի համբերատարություն: Բայց ցանկացած պարագայում կարծում եմ, որ հնարավոր է, ճիշտ է, ոչ մնացած աշակերտների նման, բայց նրանց էլ փոխանցել այն գիտելիքները, որոնք կօգնեն առաջընթաց գրանցելու:

ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատելիս շատ կարևոր է նաև դասարանի մթնոլորտը, այս պարագայում ուսուցիչը պետք է նպաստի, որ աշակերտները այդ երեխաներին որպես իրենց ընկերներ ընկալեն, օգնեն և դրանով իսկ առավել արդյունավետ դասեր անցկացնեն:

Ի վերջո, կարող ենք ասել, որ ԿԱՊԿՈՒ աշակերտները բոլորի նման իրավունք ունեն կրթություն ստանալու, նրանք ևս համարվում են հասարակության լիարժեք անդամ: Փորձը ցույց է տալիս, որ նրանց մեջ էլ լինում են շատերը, որոնք կյանքում մեծ բարձունքների են կարողանում հասնել:

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

2. «Կրթության մասին» ՀՀ օրենք, 6-րդ հոդված, մաս 6:
3. https://www.arlis.am/documentview.aspx?docid=67166
4. https://escs.am/am/static/inclusiveeducation?s=edu
5. https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_8.pdf

6. ՀԱՎԵԼՎԱԾ

Դասապլան 1

Ուսուցիչ՝ Պետրոսյան Մարտուն

Առարկա՝		Ամսաթիվ	11.11.2021	Կիսամյակ	1-ին	Դասարան	9-ա
Թեմա՝		Ֆուտբոլ մարզաձևի առանձնահատկությունները աշակերտների, հատկապես՝ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելիս					
Օգտագործվող նյութեր՝		Գնդակ, սուլիչ, կոն					
Դասի նպատակը՝		Հնարավորինս կարողանալ ԿԱՊԿՈՒ երեխա ներին ներգրավել դասապրոցեսի մեջ, սովորեցնել ֆուտբոլի կանոնները և հմտություններ ը					

		Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ		
Վերջնարդյունքները		Աշակերտները կարողացան հնարավորին ս տիրապետել ֆուտբոլ մարզաձևին, սովորեցին ճիշտ փոխանցումներ կատարել, կարողացան թիմակիցների հետ արդյունավետ աշխատել		
Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական Գործունեություն Աշակերտ Ներ	Ուսումնական Գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)

Բաժանվել խմբերի, Կատարել ֆուտբոլային վարժություններ, անել փոխանցումներ, աշխատել թիմակիցների հետ Դասի տևողությունը՝ 1 դասաժամ՝ 45 րոպե	Դասին մասնակցում են 22 աշակերտ՝ 12 աղջիկ, 10 տղա, որից երկուսը ԿԱՊԿՈԻ են, նրանք դասի ընթացքում կատարում են ուսուցչի ցույց տված վարժությունները և փորձում են այնպես անել, որ ԿԱՊԿՈԻ երեխաները նույնպես կատարեն դրանք	Ուսուցիչը հրահանգներ է տալիս և ստեղծում է այնպիսի պայմաններ, որպեսզի աշակերտները ճիշտ կատարեն հանձնարարված վարժությունները, առանձնահատուկ ուշադրություն է դարձնում ԿԱՊԿՈԻ երեխային, որպեսզի նա հնարավորին ս ներգրավի վարժությունների մեջ, օգնում է նրան կատարել այդ վարժությունները	Աշակերտները ինչ գիտեն ֆուտբոլի մասին, ինչ սովորեցին դասի ընթացքում	Հին պայուսակ մեթոդով խմբերի բաժանում, զրույց մեթոդով Ֆուտբոլի ներկայացում
Տնային աշխատանք	Հավաքել ֆուտբոլի մասին հետաքրքիր տեղեկություններ և կատարել գնդակով ճիշտ փոխանցումներ			

Դասապլան 2

Ուսուցիչ՝ Պետրոսյան Մարտուն

Առարկա՝		Ամսաթիվ	13.11.2021	Կիսամյակ	1-ին	Դասարան	6՝
Թեմա՝		Շարային վարժությունների կատարում, աշխատանք ԿԱՊԿՈՒ երեխաների հետ					
Օգտագործվող նյութեր՝		Կոներ					

Դասի նպատակը՝	Որպեսզի աշակերտները սովորեն տարբերել աջը ձախից, կարողանան ճիշտ կատարել դարձումներ շարժման ընթացքում և տեղում, այս ամենը վերաբերում է նաև ԿԱՊԿՈՒ երեխաներին			
	Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ			
Վերջնարդյունքները		Աշակերտները ձեռք կբերեն հկունություն, կիմտանան իրենց շարժումների մեջ:		
Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական Գործունեություն Աշակերտ Ներ	Ուսումնական Գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)

Բաժանվել շարքերի, Կատարել դարձումներ, աշխատել շարքի մյուս մասնակիցների հետ Դասի տևողությունը՝ 1 դասաժամ՝ 45 րոպե	Դասին մասնակցում են 22 աշակերտ՝ 12 աղջիկ, 10 տղա, որոնցից երկուսը ԿԱՊԿՈՒ են, նրանք դասի ընթացքում կատարում են ուսուցչի ցույց տված դարձումները և իրենք ևս փորձում են ճիշտ կատարել	Ուսուցիչը հատկապես ուշադրությունը սևեռում է ԿԱՊԿՈՒ աշակերտների վրա, փորձում է այնպես անել, որ նա ևս կարողանա կատարել հանձնարարությունը	Ի՞նչ է դարձումը, Ո՞րն է դարձումների տարբերությունը	Զրույց մեթոդի միջոցով բացատրել շարային վարժությունները, համագործակցության մեթոդ
Տնային աշխատանք	Տանը կատարել այն բոլոր վարժությունները, որոնք սովորել են դասի ընթացքում			

Փոխտնօրեն՝ Սաֆարյան Բավական